22727

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՔ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

# ԾՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻ

1896-97

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՄԽԻԹԱՐԱՑ, Ի Ս. ՂԱԶԱՐ

1896

37…
7-29

2010

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

# ԾՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆՑ

12002

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՔ

375
Հ-29

# ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

# ԾՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻ

1896–97

ՎԵՆԵՏԻԿ
ՏՊԱՐԱՆ Ս. ՂԱԶԱՐՈՒ
1896

КУЛЬТУРНО-ПРОСВЕТНАЯ ОРГАНИЗАЦИЯ „ЕРЕВАН" НА АРМЕНЦАТЕ В БЪЛГАРИЯ
«ԵՐԵՎԱՆ»
инв. №: 11034

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

36846-66

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ՎԵՆԵՏԿՈՅ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ի ԳԱՏԸ - ՔԷՕՅ

## ՆՊԱՏԱԿ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1. Մխիթարեան Միաբանութեան Նպատակն է ազգին բարոյական և մտաւորական կրթութեան զարգացմանը աշխատիլ, առ որ հասնելու միակ միջոց համարած է իրաւամբ Դաստիարակութիւնը։ Այսով նա ո՛ և է ջանք չի խնայեր հայ մանկտւոյն մտացը մէջ տպաւորելու ինչ որ բարի է և օգտակար, նախ իրենց անձանց և ընտանեաց, ապա ընդհանուր ազգին՝ որոյ անդամ է իւրաքանչիւր անհատն։ — Մոտա-Պուռնու գաւառանդին վրայ կառուցեալ վարժարանն — յատկապէս հայազգի մանկտւոյն կրթութեան համար սահմանեալ — իրեն բարեկարգութեամբն և կանոնաւոր ընթացքով՝ կ'աշխատի անխոնջ այն Նպատակին հասնելու։

2. Դաստիարակութեան մասին՝ ամենայն փոյթ կը տանուի, հսկելով աշակերտաց բարոյական ընթացքին, խրատելով և ուղղելով յոռի բերմունքը, խրախուսելով ի բարին և քաղցրութեամբ շահելով անոնց սիրտը։ — Նմանապէս ուշ կը դրուի որ աշակերտները միշտ մաքուր ըլլան, և զգեստնք, խազերն ու մարգք՝ կանոնաւոր։

50785-Ա.Հ.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

3. Վենետկոյ Մայրավանէն կողմէն ընտրեալ անձերէ կը բաղկանայ սոյն վարժարանի վարչական մարմինն՝ հետեւեալ կերպով.

ա. Տեսուչ, ում յանձնուած է վարժարանիս ընդհանուր ուղղութիւնը։

բ. Ուսումնապետ, որոյ պաշտօնն է ուսմանց ծրագրին գործադրութեանը հսկել։

գ. Մատակարար, հոգաբարձու ուտեստի, հանդերձեղինաց եւ այլ պիտոյից։

դ. Երկրորդական պաշտօնեայք, որոնք ուսուցիչ են միանգամայն։

Վարժարանս ունի նաեւ արտաքին ուսուցիչներ եւ հսկողներ, ինչպէս. ուսուցիչք Գաղղիերէնի, Տաճկերէնի, Իտալերէնի, Գերմաներէնի, Տոմարակալութեան, Երաժշտութեան, Գծագրութեան, Հայ եւ Եւրոպական Գեղագրութեան, Մարմնամարզի, եւ այլն։

4. Վարժարանիս շէնքն օդաւէտ է եւ ծովահայեաց, եւ աշակերտաց խաղի հրապարակը ծառերով ու ծաղկով լաւ պատսպարեալ։ — Մասնաւոր ննջարանք կան թէ երիցագունից եւ թէ կրտսերագունից առանձինն, նոյնպէս սերտարաններ եւ դասարաններ։ — Կայ յատուկ մատուռ մը, ուր աշակերտք օրն երկու անգամ կը ժողովին՝ առաւօտեան եւ երեկոյեան աղօթքի։ — Կան նաեւ Բնաբանութեան եւ Տարրաբանութեան գործեաց, եւ Հանքաբանական նիւթոց հաւաքածոյք. նաեւ Թատր մի՝ ուր երբեմն երբեմն սիրտ եւ միտք կրթելու ներկայացումներ կը տրուին։



## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԵՒ

## ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐՈՒՄՆ ԱՇԱԿԵՐՏԵԼՈՑ

5. Ուսումնական ընթացքն է վեց տարի, բաց ի նախապատրաստական դասէն՝ որ երկու տարի կը տեւէ։

6. Աշակերտ մը ստորին դասէ բարձրագոյն դաս անցնելու համար, պարտաւորեալ է մասնաւոր քննութիւն տալու։

7. Տարին երեք անգամ քննութիւնք կ'ըլլան, Ծնընդեան եւ Զատկի՝ գրաւոր. իսկ մեծ արձակուրդէն առաջ՝ գրաւոր եւ բերանացի միանգամայն։ Այս քննութիւնք կը տրուին ի ներկայութեան վարչական մարմնոյն եւ ուսուցչաց։

Դարձեալ մէն մի աշակերտի գրաւոր քննութեանց վիճակացոյցներն ամեն քննութենէ ետքը առանձինն ծնողաց կամ խնամակալաց կը ղրկուին։

8. Վարժարանիս աշակերտք թոշակաւորք են եւ ձրիավարժք։

9. Թոշակաւոր աշակերտութեան ներկայացող մը՝ գէթ ինն տարուան պէտք է ըլլայ եւ ոչ աւելի քան տասնուչորս։ Եւ եթէ ուրիշ վարժարանի մը աշակերտած է, պէտք է ունենայ վկայագիր մը բարի վարուց եւ ջանասիրութեան։

10. Աշակերտք երեք դասակարգի կը բաժնուին ըստ իրենց թոշակին.

ա. Գիշերօթիկ, որոց տարեկան թոշակն է 30 օսմ. լիրա։

բ. Կիսաթոշակ կամ Ցերեկօթիկ, տարեկան 15 օսմ. լիրա։

գ. Ձրիավարժ, սահմանեալ թուով՝ Մուրատ-Ռափայէլ վարժարանի հաշուին, որոց ընդունելութեան հաւանութիւնը Վենետկոյ խնամակալութենէն կախում ունի։

## ՊԱՅՄԱՆՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ

### ԹՈՇԱԿԱՒՈՐՔ

11. Աշակերտաց թոշակը կը վճարուի չորս ամիսը մի անգամ կանխիկ, այսինքն, ի սկիզբն Սեպտեմբեր, Յունուար և Մայիս ամսոց։

Եթէ աշակերտի մը թոշակը չի վճարուի իր սահմանեալ ժամանակին, տասնուհինգ օր պայմանաժամէ ետքը՝ իւր ծնողաց կը վերադարձուի անպատճառ։

Աշակերտի մը սահմանուած թոշակէն զատ՝ կը վճարուի մէկ անգամուան համար 3 օսմ. լիրա, իբր մուտքի ծախք։

12. Թոշակին վրայ հարիւրին քսան զեղչ կ'ըլլուի այն ծնողաց կամ խնամակալաց, որք երկու կամ երեք եղբարք ի միասին կը ներկայացնեն վարժարանիս աշակերտութեան։

13. Ո՛ր և իցէ պատճառաւ, եթէ ծնողք և կամ խնամակալք աշակերտ մը ժամանակէն առաջ հանեն վարժարանէս, իրաւունք չունին ամենևին յետս պահանջելու վճարեալ դրամն։

14. Դասագրոց, թղթեղինաց և լուացքի ծախքը ծնողաց վրայ է, և արգիլեալ է դրսէն թուղթ, գրիչ և գրեան բերելը։

15. Վարժարանս կը հոգայ նաև բժիշկն ու դեղերը՝ թեթև և անցողական հիւանդութեանց, որոց ծախուց համար՝ իւրաքանչիւր աշակերտ պարտական է տարին մէկ արծաթ մեճիտ վճարել։ Բայց երբ տեսնուի ծանր հիւանդութեան երևոյթ մը, խորհրդով բժշկին՝ իսկոյն ծնողաց իմաց կը տրուի, որպէս զի գան առնուն զաւակնին։

### ՁՐԻԱՎԱՐԺՔ

16. Բերա, Նիկոմիդիա, Պարտիզակ, Տրապիզոն, Ղրիմ և այլուր հաստատեալ Մխիթարեան դպրոցներէ



միայն կ'ընդունուին ձրիավարժ աշակերտք, և այն՝ գիտութեամբ և հաւանութեամբ վենետկոյ խնամակալաց ժողովոյն։

17. Ձրիավարժք առ նուազն երկոտասանամեայ ըլլալու են, և կամ առ առաւելն՝ հնգետասանամեայ։

18. Տղայ մը չի կրնար աշակերտիլ վարժարանիս ձրիաբար՝ առանց ընտրութեան և վկայութեան Տեսչաց վերոյիշեալ դպրոցներուն։

19. Զգեստեղինաց և գրական պիտոյից ծախքը ծնողաց վրայ է, ինչպէս նաև բժշկի և դեղոց համար՝ իւրաքանչիւր աշակերտ պարտի վճարել տարին մէկ արծաթ մեճիտ։

20. Ձրիավարժք ջանալու են դասէ մ'ուրիշ բարձրագոյն դաս անցնիլ ամէն տարի. հակառակ պարագային՝ նովին իսկ գործով կը կորսնցնեն իրենց ձրիավարժ ըլլալու իրաւունքը։

### ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

21. Զգեստեղէնք, կահք, և այլն. — Աշակերտք առհասարակ պարտաւորեալ են վարժարանիս համազգեստը կրելու, ոչ ոք ազատ է այս պարտաւորութենէս։

22. Աշակերտաց ո՛ր և իցէ կտաւեղէն և զգեստները նշանակուած պիտ'ըլլան առանձին թուանշանով մը, զոր Տեսչութիւնը կու տայ իւրաքանչիւրին։

23. Աշակերտ մը՝ մուտքի ժամանակ՝ պէտք է հետը ունենայ. — Ձեռք մը ամենօրեայ զգեստ, անկողին (շիլթէ) և անկողնոյ ծածկոց ճերմակ, 2 բարձ, 4 բարձերես, 2 վերմակ, 4 սաւան, 6 երեսսրբիչ։

Դարձեալ, 12 շապիկ, 12 շապկընկեր, 4 ասուի (ֆլանէլ), 12 թաշկինակ, 12 զոյգ գուլպայ, երկու զոյգ կօշիկ, մի զոյգ հողաթափ, սանտր, մկրատ և խոզանակ։

24. Մէն մի աշակերտ կը ստանայ վարժարանիս կողմանէ, ա. երկաթէ մահճակալ մը, բ. յարդեայ անկողին և գ. փոքրիկ դարան մը՝ իւր կարևոր պիտոյից համար։

25. Գրական պիտոյք և դրամ. — Աշակերտաց գրեանքը, տետրակներն և այլ դասական պիտոյքը վարժա-

րանս կը մատակարարէ կանխիկ վճարմամբ՝ առանց որ և է բացառութեան։ Հետևաբար կը խնդրուի որ ծնողք կամ խնամակալք բարեհաճին ծանուցանել ամեն անգամ Տեսչութեանս՝ տղու մը յանձնուած դրամին քանակը։

26. Թոյլ տուեալ չէ դաս առնուլ մասնաւոր վճարմամբ, գիրք գնել, վաճառել և կամ ընծայ ընդունիլ՝ բայց եթէ Տեսչին գիտութեամբ։

## ՕՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

27. Աշակերտք օրուան ընթացքին մէջ 4 կամ 5 ժամ մասնաւոր հսկողի մը խնամոց ներքև սերտարաններու մէջ դաս պատրաստելու կը զբաղին։

28. Իւրաքանչիւր դասախօսութիւն կը տևէ մէկ ժամ։ — Օրը չորս կամ հինգ դասախօսութիւնք կ'ըլլան առանձին դասարաններու մէջ։

29. Ցերեկի ճաշէն ետքը՝ ամեն օր մէկ ու կէս ժամ աշակերտք հանգիստ ունին պարտէզը բոլոր հսկողաց ընկերակցութեամբ, ինչպէս նաև քառորդ մը ժամու՝ ամեն դասախօսութենէ ետքը։

30. Սեպտեմբեր մէկէն մինչև մարտ մէկ՝ աշակերտք կ'ելնեն անկողնէն առաւօտեան ժամը 6ին, (միշտ ըստ եւրոպական ժամացուցի), և մարտի մէկէն՝ մինչև ցվերջ յունիս ամսոյ՝ ժամը $5 \frac{1}{2}$ին։ Իսկ երեկոյեան ժամը $8 \frac{1}{2}$ին կամ 9ին՝ անկողին կ'երթան։

## ՈՒՏԵՍՏ

31. Գիշերօթիկք և կիսաթօշակք՝ առաւօտ ժամը 7 ու կէսին կը նախաճաշեն, մերթ կաթով-սուրճ և մերթ թէյ։

Գիշերօթիկք և կիսաթօշակք կէս օրին կը ճաշեն երկու տեսակ, և շաբաթը երկու անգամ պտուղ. իսկ հացը կը բաշխուի ըստ անձնիւր ախորժակի։

Գիշերօթիկք միայն՝ երեկոյեան ժամը 7 ու կէսին կամ 8ին կ'ընթրեն երկու տեսակ։

Բաց աստի, երեկոյեան ժամը 3 ու կէսին հաց կը բաժնուի գիշերօթիկ և կիսաթօշակ աշակերտաց։



## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

32. Բաց ի ծնողաց և խնամակալաց՝ ոչ ումեք թոյլ տրուած է տեսակցիլ աշակերտներէ միոյն հետ՝ առանց կանխաւ անոնց հաւանութեանը։ Եւ այս տեղի պիտ'ունենայ վարժարանիս հիւրանոցին մէջ, ըստ կարելւոյն համառօտիւ։

## ՏԵՍԱԿՔ ՊԱՏԺՈՅ

33. Ըստ յանցանաց՝ աշակերտք կը կրեն զանազան պատիժներ. ինչպէս, պատիժ ընդօրինակութեան, և զբրկումն խաղէ, շրջագայութենէ, կերակուրէ և ընկերակցութենէ։ Բայց Տեսուչն՝ ի մասին տղայական ծուլութեան, անհանդարտութեան, անմտադրութեան և կանոնազանցութեան՝ կը ջանայ խրատով, քաղցրութեամբ և յանդիմանութեամբ ուղղել զերենք։

34. Աշակերտի մը ամենէն մեծ պատիժն է վարժարանէս մերժուիլն, որոյ պատճառներն են՝ բնութիւն դարձած ծուլութիւն, անուղղայ ընթացք, ըմբոստութիւն, և որ մեծագոյնն է՝ բարուց ապականութիւն։

## ԱՐՁԱԿՈՒՐԴ

35. Տարեկան ընթացքի մէջ՝ աշակերտք երեք փոքր և մի մեծ արձակուրդ ունին՝ հետևեալ կերպով. — ա. Դեկտեմբեր 25էն սկսեալ մինչև Յունուար 8՝ տասնուհինգ օր. — բ. Բարեկենդանի ժամանակ՝ ութ օր. — գ. Զատկին՝ տասնուհինգ օր, և դ. Ամառնային երկամսեայ մեծ արձակուրդը։

Այն երեք փոքր արձակուրդներուն՝ Տեսչութիւնս յանձն չառնուր աշակերտ մը պահել վարժարանը, բայց միայն պայմանաւ՝ որ ծնողքը կամ խնամակալը օրական տասն դահեկան վճարեն։ Իսկ մեծ արձակուրդին՝ անպայման ամեն աշակերտք — տեղացի և դրսեցի — առանց բացառութեան իրենց ծնողացը կամ խնամակալացը կը յանձնուին։

36. Վերոյիշեալ արձակուրդներու ժամանակամիջոցներէ դուրս՝ ամէն աշակերտք ջանալու են ըստ կարի բացակայ չի գտնուելու վարժարանէս. սակայն ի հարկին՝ երբ իրենց ծնողքէն կամ խնամակալէն կանչուին ի տեսակցութիւն, երկրորդ օրը երեկոյին անմիջապէս վերադառնալու են։

## ՀՍԿՈՂՔ

37. — Վարժարանս ունի երեք հսկողներ, որոց պարտքն է ուշ դնել կարգապահութեան՝ սերտարանի, պարտիզի, ճաշարանի, մատրան, ննջարանի և այլ պարագայից մէջ, ինչպէս նաև շրջագայութեանց ատեն։

Հսկողք պարտաւորեալ են միշտ թէ ուսման և թէ հանգստեան ժամերուն՝ քաղցրավար և ազնուութեամբ վարուելու աշակերտաց հետ։

Երբ տեսնեն կանոնազանցութիւն մը և կամ որ և իցէ ծանր յանցանք, անյապաղ փութով իմաց պիտի տան Տեսչին՝ որ ժամանակին դարմանն ընէ։

Այս հսկողներէն զատ կայ նաև գիշերային պահապան մը, որ մինչև առաւօտ ննջարանաց սրահները անդադար կ՚երթևեկէ ի հսկողութիւն։

# ԾՐԱԳԻՐ

## ՄԻՋՆԱԿԱՐԳ ՈՒՍՄԱՆ

### ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱԺԱՐԱՆԻ

Ի ԳԱՏԸ–ՔԷՕՅ

## ՏԱՐՐԱԿԱՆ ԿԱՐԳ

### ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

| | | |
|---|---|---|
| Քրիստոնէական վարդապետութիւն, շաբաթը | 1 | ժամ. |
| Հայերէն լեզու . . . . . . | 6 | » |
| Գաղղիերէն լեզու . . . . . | 6 | » |
| Պատմութիւն . . . . . . | 2 | » |
| Թուաբանութիւն . . . . . . | 2 | » |
| Աշխարհագրութիւն . . . . . | 2 | » |
| Իրագիտութիւն . . . . . . | 2 | » |
| Նկար . . . . . . . | 1 | » |
| Մարմնամարզ . . . . . . | 1 | » |
| | 23 | ժամ. |

### ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Փոքր Քրիստոնէական վարդապետութիւն Բելարմինոսի. — Խրատ և սկզբունք կրօնքի և մարդավարութեան։

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 6 ժամ)

Ընթերցում Այբբենարանի. — Ընդօրինակութիւն տուեալ հատուածներու. — Բերանացի ուսում ամենապարզ հատուածներու՝ հանդերձ բացատրութեամբ. — Ուսում ընտանեկան բառերու. — Գեղագրութիւն:

## ԳԱՂՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 6 ժամ)

Lecture. — Explication du sens des mots. — Ecriture. — Orthographe des mots simples. — Enseignement des mots par l'aspect. — Récitation de petits morceaux faciles. — Calligraphie (méthode Godchaux).

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 2 ժամ)

Պատմութիւն Ս. Գրոց. — Աշխարհիս ստեղծումէն մինչև Իսրայելացւոց թագաւորութիւնը:

Առաջին չորեքամսեայ. — Աշխարհիս ստեղծումէն մինչև Յովսեփայ մահը:

Երկրորդ չորեքամսեայ. — Մովսիսէն մինչև Յեսուայ մահը:

Երրորդ չորեքամսեայ. — Դատաւորք, մինչև Սաւուղ:

(Ուսուցիչը պէտք է որ պատմէ տալիք դասը, և միանգամայն ջանայ ազատաբար պատմել տալ զայն աշակերտներուն):

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 2 ժամ)

Աշխարհագրական սահմանները. պարզ ոճով բացատրել և ծանօթ օրինակներով ըմբռնել տալ աշակերտներուն. — Ի՞նչ է եր-



կրագունտ. — Ի՞նչ են աշխարհացոյց տախտակները. — Քանի մը մեծ ծովերու և ցամաքներու անունները. — Եւրոպայի տէրութեանց անունները և անոնց մայրաքաղաքները:

(Այս առաջին շրջանիս, ուսուցիչը պէտք չէ խճողէ տղայոց միտքը աշխարհագրական անուններով. այլ միայն ընտելացընէ զանոնք աշխարհագրական բառերու և ուսման գործիներուն, ինչպէս երկրագունտներու, աշխարհացոյց տախտակներու, և այլն):

## ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 2 ժամ)

Ընթերցում թիւերու. — Յաւելում, բարձում. — Աղիւսակ բազմապատկութեան. — Բազմապատկութիւն. — Բազմաթիւ կրթութիւններ տախտակի վրայ և գրաւոր պարտականութիւններ. — Քանի մը պարզ առաջարկութիւններ և անոնց բանաւոր լուծումը պահանջել. — Մտաւորական հաշիւներ:

## ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 2 ժամ)

Օգտակար բոյսեր. — Ցորեն և անոր մշակութիւնը, գործածութիւնը. — Խաղող, ըմպելիք. — Տուն և անոր մասերը. — Կահկարասի. — Բամբակ, կանեփ, մետաքս, կտաւատ:

Օգտակար կենդանիներ. — Վայրի կենդանիներ:

Մետաղներ. — Ածուխ և ուրիշ վառելի նիւթեր:

Երկիր, արև, լուսին. — Բաժանում ժամանակի:

Ջուր, ծով, գետ, և այլն:

(Իրագիտութեան նպատակն ըլլալով՝ տղուն հետաքրքրութեան ոգին զարգացնել և անոր ըրած դիտողութիւններուն արդիւնքը բացատրել տալ, ուսուցիչն՝ իր դասախօսութիւններուն նիւթ մատակարարելու համար՝ պարտի ընտրութիւն մ'ընել աշակերտաց ծանօթ բոյսերու և կենդանիներու մէջ, եթէ կարելի է՝ ամէն անգամ առարկաները տղայոց աչքին առջևը դնելով: Այս դասերը գրաւոր կերպով պարտաւորիչ չեն):

# ՏԱՐՐԱԿԱՆ ԿԱՐԳ

## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

| | | |
|---|---|---|
| Քրիստոնէական վարդապետութիւն, | շաբաթը 1 | ժամ |
| Հայերէն լեզու | 5 | » |
| Գաղղիերէն լեզու | 5 | » |
| Տաճկերէն լեզու | 1 | » |
| Թարգմանութիւն | 1 | » |
| Պատմութիւն | 2 | » |
| Աշխարհագրութիւն | 2 | » |
| Թուաբանութիւն | 2 | » |
| Իրագիտութիւն | 2 | » |
| Նկար | 1 | » |
| Մարմնամարզ | 1 | » |
| | 23 | ժամ |

### ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Համառօտ Քրիստ. վարդապետութիւն պատմական Ձևօրեայ, մասն Ա. — Կրօնական խրատներ և սկզբունք մարդավարութեան։

### ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 5 ժամ)

Ընթերցման կանոնք և գործնական հրահանգներ. — Ուղղագրութիւն. — Բերանացի ուսումն՝ հանդերձ բառերու և պարբերութիւններու բացատրութեամբ. — Տարրական քերականութիւն աշխարհիկ լեզուի (խօսքի մասերը). — Գեղագրութիւն։

36846-66



### ԳԱՂՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 6 ժամ)

Lecture. — Ecriture. — Récitation française. — Explication du sens des mots et des phrases.

Grammaire française: — Etude élémentaire des différentes espèces de mots: le substantif, l'article, l'adjectif. — Exercices de conjugaison régulière. Exercices sur l'accord du genre et du nombre.

Petits exercices d'orthographe oraux et écrits.

Analyse grammaticale réduite à ses formes les plus simples.

Calligraphie (méthode Godchaux).

### ՏԱՃԿԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 1 ժամ)

Ընթերցումն. — Գիր.

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Կրթութիւն թարգմանութեան աշխարհաբարէ ի գաղղիերէն, և փոխադարձ, համառօտ պարբերութիւններու։

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 2 ժամ)

Պատմութիւն Ս. Գրոց. — Ա. Թագաւորութիւն Իսրայելացւոց՝ մինչև Բաբելոնի գերութիւնը. — Բ. Բաբելոնի գերութենէն մինչև Քրիստոս. — Գ. Քրիստոսի վարքը մինչև Երուսաղեմի կործանումը։



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
ИМ. А. Мясникяна

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 2 ժամ)

Ծով և ցամաք. Ովկիանոս. — Աշխարհիս հինգ մասերը. — Ձև և սահման. — Ծովեր, մեծ ծոցեր և նեղուցներ. — Գլուխներ, կղզիներ, թերակղզիներ. — Լեռներու մեծ շղթաները. — Գետեր և լիճեր. — Գլխաւոր տէրութիւններն և անոնց մայրաքաղաքներն. — Վաճառականութեան գլխաւոր նաւահանգիստներն։

(Ուսուցիչը ջանայ պատմելու երևելի ճանապարհորդներու գիւտերէն քանի մը հատը)։

## ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 2 ժամ)

Կրկնութիւն. — Բաժանումն. — Կրթութիւն չորս գործողութիւներու և առաջարկութիւններ. – Չորս գործողութիւններուն փորձերն. — Սահման և ընթերցումն տասնորդական կոտորակներու. — Նախագիտելիք (ստորակետի աջ և ձախ շարժելը. վրոյ դնել աջակողմը և ձախակողմը). — Տասնորդականներու չորս գործողութիւնները. — Կրթութիւններ և առաջարկութիւններ։

## ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 2 ժամ)

Առաջին տարւոյն ծրագիրը պիտի ծառայէ նաև ներկայ տարւոյս։

---

# ԿՐԹԱՐԱՆ

(ԳԻՄՆԱՍԻՈՆ)

## ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ

### ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

| | | |
|---|---|---|
| Քրիստոնէական վարդապետութիւն, շաբաթը | 1 | ժամ |
| Հայերէն լեզու . . . . . | 4 | » |
| Գաղղիերէն լեզու . . . . . | 4 | » |
| Տաճկերէն լեզու . . . . . | 2 | » |
| Թարգմանութիւն . . . . . | 2 | » |
| Պատմութիւն . . . . . | 1 ½ | » |
| Աշխարհագրութիւն . . . . . | 1 ½ | » |
| Թուաբանութիւն . . . . . | 2 | » |
| Իրագիտութիւն . . . . . | 1 ½ | » |
| Գեղագրութիւն . . . . . | 1 | » |
| Երաժշտութիւն հայնական . . . | 2 | » |
| Գծագրութիւն . . . . . | 1 | » |
| Մարմնամարզ . . . . . | 1 | » |
| | 24 ½ | ժամ |

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Համառօտ Քրիստ. վարդապետութիւն պատմական Ֆլէօրեայ, մասն Բ. — Կրօնական խրատներ և մարդավարութիւն։

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(*Շաբաթը 4 ժամ*)

*Քերականութիւն աշխարհիկ լեզուի, Բ. շրջան. — Ուղղագրութիւն տեսական և գործնական. — Նախակրթանք շարադրութեան։*

## ԳԱՂՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(*Շաբաթը 4 ժամ*)

Lecture. — Récitation. — Explication du sens des mots et des phrases. — Ecriture.

Grammaire française. — Etude et définition des différentes parties du discours; conjugaison; verbes réguliers et irréguliers les plus usuels; sujet et compléments.

Analyse grammaticale.

Exercices de langue française et d'orthographe.

Courtes reproductions d' un récit ou d' une lecture faites en classe.

## ՏԱՃԿԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(*Շաբաթը 2 ժամ*)

*Ընթերցում. — Բերանացի և գրաւոր թարգմանութիւն Նեթաիֆը Ասարի Ա. մասին. — Համառօտ տարերք օսմանեան քերականութեան, մասն թուրքերէն. — Սկզբունք ուղղագրութեան. — Գեղագրութիւն։*

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

(*Շաբաթը 2 ժամ*)

*Թարգմանութիւն գաղղիերէնէ ի հայ, բերանացի։ (Ուսուցիչը պարտի իւրաքանչիւր դասախօսութեան գրաւոր հրահանգ տալ աշակերտներուն)։*



## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(*Շաբաթը 1 ժամ*)

*Պատմութիւն ազգային՝ համառօտ. — Պատմութիւն Եգիպտացւոց. Նեղոս. — Մեմփիս և Թեբէ. — Կրօնք, յիշատակարանք, բարք և ճարտարութիւն. — Նոր խուզարկութիւններ. – Ասորեստանցիք. — Տիգրիս և Եփրատ գետերուն ոռոգած երկիրները. — Բաբելոն և Նինուէ՝ ըստ հին աւանդութիւններու և նոր խուզարկութիւններու. — Փիւնիկեցիք. — Տիւրոս և Կարթագինէ. — Վաճառականութիւն և գաղթականութիւններ. — Նշանագիրք։*

*Մարք և Պարսիկք. — Իրանի դաշտը. — Յիշատակարանք և Կրօնք. — Իշխանութիւն Կիւրոսի։*

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

(*Շաբաթը 1 ½ ժամ*)

*Երկրագունդ. — Գագաթնահայեաց. — Հորիզոն. — Բևեռները. — Միջօրէական, Զուգահեռական շրջանակ և Հասարակած. — Կողմունք աշխարհի. — Երկայնութիւն և լայնութիւն աշխարհագրական։*

*Եւրոպա. — Սահման և Տարածութիւն. — Ծովեր, ծոցեր, նեղուցներ, և այլն. — Լեռներ և գլխաւոր գօտիներ. — Գետեր. — Կասպից, Սև ծով և Միջերկրական ծով թափուող գետերը. — Ատլանտեան և Սառուցեալ ովկիանոս թափուող գետերը. — Լիճեր. — Եւրոպիոյ բոյսերն ու կենդանիները. — Եւրոպիոյ տէրութիւնները. — Մայրաքաղաքները. — Բաժանումն և նշանաւոր քաղաքներ։*

## ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(*Շաբաթը 2 ժամ*)

*Կրկնութիւն չորս գործողութիւններու տասնորդական կոտորակաց. — Բաժանականութիւն թիւերու. — Նախնական թիւեր. — Նախնական արտադրիչներ. — Մեծագոյն հասարակաց բաժանարար. — Փոքրագոյն հասարակաց բազմապատիկք։*

Հասարակ կոտորակներ. — Սահմանք, սկզբունք. — Կոտորակներու յայտարարները նմանցնել. — Կոտորակները պարզել. — Յաւելում և բարձում. — Բազմաթիւ կրթութիւններ և առաջարկութիւններ։

(Չափաբերական դասախօսութեանց համար ուսուցիչն անվրէպ հետևելու է սահմանեալ դասագրքի մը)։

## ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ½ ժամ)

Բ. Շրջան. Բնակութիւն մարդոյ, զգեստ, սնունդ. — Ձուկն, օգտակար և վնասակար բոյսեր։ — Օդ, ջուր, կրակ, մթնոլորտային երևոյթներ. — Տպագրութիւն։

## ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Գեղագրութիւն հայ և եւրոպական (méthode Godchaux)։

## ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ ՁԱՅՆԱԿԱՆ

(Շաբաթը 2 ժամ)

Սկզբունք ընթերցման եւրոպական խազերու։

## ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Տարրական սկզբունք։



# ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

| | | |
|---|---|---|
| Քրիստոնէական վարդապետութիւն, շաբաթը | 1 | ժամ |
| Հայերէն լեզու | 3 | » |
| Գաղղիերէն լեզու | 3 | » |
| Տաճկերէն լեզու | 3 | » |
| Իտալերէն լեզու | 2 | » |
| Թարգմանութիւն | 1 | » |
| Պատմութիւն | 1 ½ | » |
| Աշխարհագրութիւն | 1 ½ | » |
| Թուաբանութիւն | 2 | » |
| Բնական պատմութիւն | 1 | » |
| Գեղագրութիւն | 1 | » |
| Երաժշտութիւն ձայնական | 2 | » |
| Գծագրութիւն | 1 | » |
| Մարմնամարզ | 1 | » |
| | 24 | ժամ |

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Քրիստոնէական վարդապետութիւն Ֆլէօրեայ. մասն Գ. — Կրօնական խրատներ։

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 3 ժամ)

Նախադրունք Հայ-գրաբար Քերականութեան. — Ուղղագրութիւն նոյնատառ, նմանաձայն և նմանավերջ բառերու. — Բարդ և ածանց բառերու և տողադարձի կանոնք և գործադրութիւն. — Նամակագրութիւն։

## ԳԱՂՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(*Շաբաթը 3 ժամ*)

Lecture. — Récitation. — Explication du sens des mots et des phrases. — Ecriture.

Grammaire française. – Révision des connaissances déjà acquises. — Etude plus complète de la conjugaison des verbes irréguliers.

Principales règles de la syntaxe.

Analyse grammaticale.

Analyse logique réduite à ses formes les plus simples.

Exercices de langue française et d'orthographe.

Notions et exercices d'étymologie.

Dictée. — Petits exercices de compositions ; Reproduction orale et écrite de récits faits en classe.

## ՏԱՃԿԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(*Շաբաթը 3 ժամ*)

*Ընթերցում տպագրի և ձեռագրի. — Թարգմանութիւն բերանացի և գրաւոր. — Ընդօրինակութիւն ձեռագրի. — Համառօտ տարերք օսմանեան քերականութեան. (պարսկերենի մասը և մաս մ՚ ալ արաբերենի). — Պարզ ուղղագրութիւն. — Գեղագրութիւն։*

## ԻՏԱԼԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(*Շաբաթը 3 ժամ*)

LINGUA ITALIANA

### CLASSE IV.

Esercizi di lettura. — Nozioni di ortografia. — Avviamento alla grammatica. — Verbi ausiliari, Essere ed Avere, coniugati



mediante facili proposizioni. — Esercizi di dettato. — Brevi conversazioni in lingua italiana tra gli alunni e il professore. — Esercizi di memoria.

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

(*Շաբաթը 1 ժամ*)

*Թարգմանութիւն բերանացի և գրաւոր՝ գաղղիերէն գրքի մը վրայէն։*

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(*Շաբաթը 1½ ժամ*)

*Պատմութիւն Յունաց. — Աշխարհագրութիւն նախնի Յունաստանի և Միջերկրականի արևելեան ափունքներու. — Յունաստանի նախկին ցեղերը. — Գաղթականութիւններ. — Վաճառականութիւն Յունաց։*

*Դիւցազներու ժամանակ. — Պատերազմ Տրոյիոյ։*

*Սպարտա. — Լիգուրկոս, իր օրէնսդրութիւնները. — Թագաւորներ, ծերակոյտ, եփորոսք։*

*Աթէնք — Սողոն, Պիսիստրատ. — Օրէնսդրութիւն Սողոնի. — Պատգամներ, հանդէսներ, խորհրդատօներ։*

*Ողիմպական խաղեր, ևայլն։*

*Մարական պատերազմ. — Մարաթոն, Սաղամինա և Պղատէա. — Լէոնիդաս, Թեմիստոկլէս, Արիստիդէս։*

*Պերիկլէս. — Փոփոխութիւն վարչական ձևին, ատեան ժողովրդեան, հինգ հարիւրոց խորհուրդը։*

*Արուեստներ, հասարակաց շէնքեր, մատենագրութիւն, թատերգութիւն և պերճախօսութիւն։*

*Պեղոպոնեսական պատերազմ. — Աթենքի անկումը. — Սոկրատայ մահը։*

*Գերիշխանութիւն Սպարտայի. — Պարսից դէմ մղած պատերազմները. — Նահանջ բիւրուն. — Ագեսիղայոս. — Դաշնագրութիւն Անդալկիտեան։*

*Թեբէի զօրանալը. — Եպամինոնդաս։*

Մակեդոնիոյ զօրանալը. — Փիլիպպոս. — Դեմոսթենէս. — Քերոնեայի պատերազմ։

Աղեքսանդր. — Աշխարհակալութիւններն Ասիոյ, Եգիպտոսի և Հնդկաստանի մէջ. — Հիմնարկութիւն Աղեքսանդրիոյ. — Արդիւնք աշխարհակալութեանց Աղեքսանդրի. — Իր մահուան ժամանակ մակեդոնական իշխանութեան զօրութիւնը. — Համառօտ տեսութիւն Աղեքսանդրի յաջորդներուն վրայ. — Ղագոսեաններ, Սելևկեաններ. — Մակեդոնիոյ իշխանութիւնն Յունաստանի մէջ. — Փիլիպպոս, Պերսէոս. — Ետողեան և Աքայեան դաշնակցութիւնները. — Արատոս և Փիլոպեմէն. — Հռովմայեցւոց Յունաստանի և Մակեդոնիոյ տիրելը. — Յունական ոգւոյն ծաւալումն արևմուտքի մէջ և անոր ազդեցութիւնը։

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շաբաթը $1\frac{1}{2}$ ժամ)

Աշխարհագրութիւն քաղաքական. — Աշխարհագրութիւն Ասիոյ, Ափրիկէի, Ամերիկայի և Ովկիանիայի. — Սահման և ընդարձակութիւն. — Ծովեր, կղզիներ, գլուխներ, նեղուցներ. — Լեռներու շղթաներ. — Դաշտեր, գետեր, լիճեր. — Գլխաւոր տէրութիւններ, մայրաքաղաքներ, նշանաւոր քաղաքներ և վաճառականութեան գլխաւոր նաւահանգիստներ. — Եւրոպական գաղթականութիւններ։

Աշխարհագրութիւն բնական. — Մեծութիւն ցամաքի և ծովերու. — Ովկիանոս, բաժանումն, խորութիւն, աղիութիւն, գոյն. — Տեղատուութիւն և մակընթացութիւն, ալիք. — Ընթացք ծովու. — Դաշտ, հրաբուղխ. — Երկրաշարժ. — Ցամաքներու կերպարանք, կրած փոփոխութիւնները, կղզիներ. — Դրութիւն լեռներու. — Գետեր, լիճեր և ներքին ծովեր։

Կլիմայ. — Բարեխառնութեան տարբերութիւն. — Հողմ, անձրև. — Բուսաբանական և կենդանաբանական աշխարհագրութիւն. — Մարդ։



## ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 2 ժամ)

Կրկնութիւն հասարակ կոտորակներու. — Չորս գործողութիւնները. — Հասարակ կոտորակ մը տասնորդականի վերածել, և փոխադարձ. — Պարբերական տասնորդական կոտորակներ. — Յօդուածոյ թւեր. — Դրութիւն մեդրական չափերու. — Չափ երկայնութեան. ստորաբաժանմունք և բազմապատիկ. — Չափ տարածութեան, խորանարդ մեդր, հեղուկաչափ. — Չափ ծանրութեան. — Դրամներ. — Չափեր և կշիռ գաղղիական դրամներու։

Վերածել հին չափերը մեդրական դրութիւններու, և փոխադարձ. — Ամբողջ կամ կոտորակ թիւի մը քառակուսին. — Երկու թիւերու բովանդակութեան քառակուսին. — Սահման և ելուզումն քառակուսի արմատներու. — Սահման և ելուզումն խորանարդ արմատներու։

(Ուսուցիչն պարտի ըստ կարելւոյն գործնական կերպով աւանդել իւր դասերը։

## ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Կենդանաբանութիւն. — Ընդհանուր գիտելիք և սահմանք. — Նախնական տարերք կազմութեան կենդանեաց, պաշտօնք և անոնց բաժանումն։

Սննդառութիւն. — Ստամոքս. — Մարսողութիւն։

Արիւն. — Շրջան արեան. — Շնչառութիւն. — Թոքերը, սիրտն, ևայլն։

Շարժումն. — Ոսկերք. — Կմախք։

Հինգ զգայարանք, լսելիք, շօշափելիք, ճաշակելիք, տեսանելիք, հոտոտելիք։

Կենդանիներու դասակարգութիւն։

Կաթնասունք և անոնց բաժանումն։

Մարդն և անոր ցեղերը. — Մարդուս և կենդանիներու մէջ եղած տարբերութիւնը։

Թաչուններ և Սողուններ. — Գործեր. — Ձկներ. — Ճճիներ, խեցեմորթներ, կակղամորթներ, որդեր, ևայլն։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

| | | |
|---|---|---|
| Քրիստոնէական վարդապետութիւն, շաբաթը . | 1 | ժամ |
| Հայերէն լեզու . . . . . . . | 2 | » |
| Գաղղիերէն լեզու . . . . . . | 3 | » |
| Տաճկերէն լեզու . . . . . . . | 3 | » |
| Իտալերէն լեզու . . . . . . | 2 | » |
| Գերմաներէն լեզու . . . . . . | 2 | » |
| Պատմութիւն . . . . . . . | 1 | » |
| Աշխարհագրութիւն . . . . . . | 1 | » |
| Թուաբանութիւն . . . . . . | 1 | » |
| Երկրաչափութիւն . . . . . . | 1 | » |
| Բնական պատմութիւն . . . . . . | 2 | » |
| Գեղագրութիւն . . . . . . . | 1 | » |
| Ձայնական երաժշտութիւն . . . . . | 2 | » |
| Գծագրութիւն . . . . . . . | 1 | » |
| Մարմնամարզ . . . . . . . | 1 | » |
| | 24 | ժամ |

### ՔՐԻՍՏ. ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Քրիստոնէական վարդապետութիւն, մասն Դ. չափահաս տղայոց համար։

### ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 2 ժամ)

Քերականութիւն գրաբար լեզուի, Բ. շրջան մինչև բայ՝ հրահանգներով մէկտեղ. — Գրելու արուեստը, Ա. շրջան. — Շարադրութիւն և ուղղագրութիւն։



### ԳԱՂՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Etude plus approfondie des principales difficultés de la syntaxe; étude plus complète des formes.

Lectures (vers et prose) suivies de questions et d'explications.

Exercices écrits et oraux de langue française.

Récitation et explication d'auteurs.

Analyse orale ou écrite de lectures d'auteurs français.

Compositions très simples: Narrations, lettres. Dictée.

Etymologie. — Formation des mots, mots simples, dérivés, composés, synonymes, homonymes, etc.

### ՏԱՃԿԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 3 ժամ)

Կիւլտէսթէ (ընթերցումն, գրաւոր և բերանացի թարգմանութիւն, ընդօրինակութիւն). — Ուղղագրութիւն. — Քերականական լուծմունք. — Սկզբունք գաղղիերենէ ի տաճկերէն թարգմանութեան. — Համառօտ տարերք օսմանեան քերականութեան (վերջ արաբերէն մասին և քաղուածք). — Գեղագրութիւն. — Փոքր շարադրութիւններ բարոյական պատմութիւններու. — Տաճկերէն լեզուով պատմել տալ նոյնը դասարանի մէջ։

### ԻՏԱԼԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 2 ժամ)

LINGUA ITALIANA

### CLASSE V.

Esercizi di lettura. — Nozioni complementari di ortografia. — Ripetizione della grammatica svolta nella IV classe. — Nozioni complementari di grammatica. — Verbi regolari e irregolari. —

Esercizi di dettato. — Avviamento al comporre con facili composizioni. — Conversazione italiana come nella classe precedente. — Poesie facili imparate a memoria.

## ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԼԵԶՈՒ

(Շաբաթը 2 ժամ)

Տարերք գերմաներէն քերականութեան (Otto). — Ընթերցում, գրութիւն, թարգմանութիւն։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Աշխարհագրութիւն Իտալիոյ. — Նախկին ժողովուրդք. — Ետրուրացիները. — Յունական գաղթականութիւններ։

Հիմնարկութիւն Հռովմայ. — Օրէնսդրութիւններ և կրօնք. — Թագաւորներ, ծերակոյտ։

Պատրիկներու և ռամկին մէջ եղած կռիւները. — Հասարակապետութիւն. — Բդեշխութիւն, իշխանապետութիւն, տրիբուններ, ատեան ռամկին։

Տասնապետներ և ԺԲ տախտակներու օրէնք։

Տիրապետութիւն Իտալիոյ. — Զինուորութիւններ. — Գաղթականութիւն։

Պունիկեան պատերազմները. — Ամիլքար և Աննիբաղ. — Երկու Սկիպիոնները. — Կարքեդոնի կործանումը։

Տիրապետութիւն Յունաստանի. — Սպանիական պատերազմներ. — Յուգուրթեան և կիմբրեան պատերազմներ. — Ընդարձակութիւն Հռովմէական իշխանութեան։

Հետևանք աշխարհակալութեան. — Յունական ազդեցութիւնը Հռովմայ վրայ. — Ներքին խռովութիւններ. — Ագարակային օրէնք և Գրակքոսեանք. — Ընկերական պատերազմ. — Մարիոս և Սիլլա. — Տիգրան և Միհրդատ։

Քաղաքական պատերազմներ. — Իշխանապետութիւն Սիլլայի. — Սերտորիոս և Սպարտակոս։

Պոմպէոս. — Կիկերոն. — Կատիլինա։



Կեսար. — Առաջին եռապետութիւն. — Աշխարհակալութիւն Գաղղիոյ։

Քաղաքական պատերազմը. — Փարսալեան պատերազմը. — Կեսար Հռոմայ մէջ. — Իշխանապետ. — Ձև վարչութեան. — Կեսարու մահը։

Հոկտաւիանոս և Անտոնիոս. — Ակտիոնի պատերազմ. — Վերջ հասարակապետական վարչութեան։

Կայսրութիւն. — Օգոստոս. վարչութեան ձևը. — Հռոմայ և գաւառներու վարչութիւնը. — Գերմանացիներու դէմ պատերազմներ. — Յիսուսի Քրիստոսի ծնունդը. — Կայսրութեան սահմանները։

Մատենագրութիւն և արուեստներ. — Կեսարու և Օգոստոսի դարուն հռչակաւոր մատենագիրները. — Յիշատակարաններ. վաճառականութիւն. — Ճանապարհներն և թղթատարները։

Օգոստոսի ազգատոհմէն կայսրներ. — Աշխարհակալութիւն Բրիտանիոյ. — Փլաւեանք. — Երուսաղեմի կործանումը։

Տրայիանոսի աշխարհակալութեան սահմանը. — Ադրիանոս, Անտոնեանք։

Արուեստներ և գիտութիւններ. — Հռոմայ և գաւառներուն մէջ մեծամեծ յիշատակարաններ. — Անտոնիոսի դարուն հեղինակները և փիլիսոփաները։

Քրիստոնէութիւն. — Նախկին եկեղեցի. — Գետնադամբաններ. — Սեպտիմիոս Սեվերոս. — Զինուորական անիշխանութիւն. — Նորոգութիւն կայսրութեան Դիոկղետիանոսի ձեռքով. — Կոստանդիանոս. — Նիկիոյ ժողովը. — Քրիստոնէական եկեղեցւոյ կազմակերպութիւն. — Հիմնարկութիւն Կոստանդնուպոլսոյ։

Յետին ժամանակ կայսրութեան. — Արշաւանք. — Թէոդոս. — Երկու կայսրութիւններ. — Ընդարձակութիւն հռովմէական աշխարհի։

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

### Եւրոպա

Սահման և ընդարձակութիւն Եւրոպայի. — Ընդհանուր ձևը. — Գլխաւոր ծովերու նկարագրութիւնը. — Ծովուն ընթացքը։

Վերամբարձմունք ցամաքի. գլխաւոր լեռները, դաշտ, լեռնադաշտ, և մեծ ձորեր:

Ջրագրութիւն. Ջուրերու բաժանման և ընդհանուր ուղղութեան գլխաւոր կեդրոնները. — Լիճերու գլխաւոր խումբեր. — Մեծամեծ գետեր:

Եւրոպայի միջին կլիման և գլխաւոր տեղերուն միջին կլիման. — Ցրտութեան և ջերմութեան յետին սահմանները. — Յարաբերութիւն բուսաբերութեան և կլիմայի, բուսաբերութեան և բարձրութեան. — Քանի մը յատկացուցիչ օրինակ բուսաբերութեան:

Եւրոպական ցեղերը, կրօնքները և լեզուները:

Թուումն Տէրութեանց իրենց բնակիչներով, իրենց մայրաքաղաքներով, իրենց նշանաւոր քաղաքներով: Բաղդատութիւն գլխաւոր Տէրութեանց ընդարձակութեան և բնակիչներուն. բաղդատութիւն հարստութեան և զինուորական զօրութիւններու. — Համաշխարհային հաղորդակցութիւններու մեծամեծ ճանապարհները:

Յարաբերութիւն Եւրոպայի և աշխարհի միւս մասանց մէջ. — Եւրոպական գաղթականութիւններ:

## ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Շաբաթը 1 ժամ)

Յարաբերութիւն. — Համեմատութիւն, հայեցողութիւններ. — Երից կանոն. — Ըստ իւրաքանչիւր հարիւրոյ. — Շահու և ընկերութեան կանոն. — Վաճառականական զեղչ (ներքին և արտաքին). — Յարակցութեան և խառնուրդի կանոն:

## ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ

(Շաբաթը $1^{1}/_{2}$ ժամ)

Սահմանք. — Ուղիղ գիծ և մակարդակ. — Անկիւններ. — Ուղղահայեացներ:

Եռանկիւններ. — Հաւասարութիւն եռանկիւններու. — Հաւասարասրուն եռանկիւններ:

Ուղղահայեաց և խոտոր գիծեր. — Ուղղանկիւն եռանկիւններ. —



